ԿԱՐԾԻՔ

Նաիրա Սամվելի Հարությունյանի ԺԹ. 00. 03- «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Երիտասարդների նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունը ինքնագնահատականի վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Գիտական հոգեբանական գրականության մեջ սպասումները նկարագրվում են որպես ճանաչողական սոցիալական կառույցներ, որոնք ազդում են ընկալման, վարքի և ճանաչողության և ինքնագիտակցության վրա: Հետազոտողները հաճախ ուսումնասիրում են սոցիալական սպասումները փորձարարական հարացույցների ներքո՝ ուսումնասիրելու, թե ինչպես են տարբեր սպասումներն ազդում վարքի և ճանաչողության վրա: Ընդհանուր առմամբ, սպասումները հիմնարար նշանակություն ունեն մարդու ընկալման, նպատակադրման, որոշումների կայացման և շրջակա միջավայրին հարմարվելու գործընթացում: Մասնավորապես սպասումները կարող են ազդել իրադարձություններին հուզական արձագանքներ տալու վրա: Դրական սպասումները կարող են հանգեցնել երջանկության և բավարարության, երբ պասումները արդարացված են, մինչդեռ բացասական սպասումները կարող են հանգեցնել հիասթափության կամ տագնապի:

Միջդիսցիպլինար ուսումնասիրություններում հեղինակի ատենախոսության գլխավոր հասկացությունները պարբերաբար ուսումնասիրվել են և ստացել բազմաթիվ գիտական գնահատականներ: Մասնավորապես նպատակային դիրքորոշումները բազմիցս հիշատակված են ռուսական գրականության մեջ, սակայն դրանց կոնցեպտուալ բովանդակությունը կարիք ունի լրամշակման, ինչն էլ ատենախոսը փորձել է իրականացնել: Նպատակային դիրքորորոշումները վերաբերում են անձի գնահատականներին, զգացմունքներին կամ համոզմունքներին կոնկրետ նպատակների, դրանց հասնելու ուղիների և արդյունքների նկատմամբ:

Սպասումները և նպատակային դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն անձի ես-հայեցակարգի, մասնավորապես ինքնագնահատման գործընթացի վրա: Այսպես՝ սոցիալական փոխազդեցությունների և հարաբերությունների հետ կապված սպասումները, որոնք մարդիկ ունեն իրենք իրենցից, կարող են էապես ազդել ինքնագնահատականի վրա և անիրատեսական կամ չափազանց մեծ սպասումները կարող են մարդուն դրդել ձախողման: Այս սպասումների չիրականացումը հանգեցնում է անբավարարության, ոչ կոմպետենտության կամ հիասթափության զգացումների՝ դրանով իսկ նվազեցնելով ինքնագնահատականը:

Առանձնահատուկ կարևոր տեսագործնական նշանակություն են ձեռք բերում այնպիսի հարցադրումների շեշտադրումը, որոնք վերաբերում են անձի ինքնագնահատականի վրա սոցիալական սպասումների տարբեր բաղադրիչների ազդեցությանը, նպատակային դիրքորոշումների կառուցվածքաբաղադրիչային համակարգի վրա վերջիններիս ազդեցության կշռի բացահայտմանը, դրանցում առկա վարքային և անձնային առանձնահատկությունների և օրինաչափությունների վերհանմանը: Հենց նման խնդիրների լուծմանն էլ ուղղված է Նաիրա Սամվելի Հարությունյանի ԺԹ. 00. 03- «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Երիտասարդների նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունը ինքնագնահատականի վրա» թեմայով ատենախոսությունը:

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, որի ծավալը կազմում է 175 համակարգչային էջ, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, 186 անուն գրականության ցանկից և 26 էջ ընդհանուր ծավալով հավելված:

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան, խնդիրները, առաջադրված է հետազոտության վարկածը, համաձայն որի նվաճման տարբեր մոտիվացիա ունեցող երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունը պայմանավորված է ռեֆլեքսիվության մակարդակով: Ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը և մեթոդները, ատենախոսության տեսագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում (Նպատակային դիրքորոշումների եվ սոցիալական սպասումների գիտական հայեցակարգերի տեսական վերլուծություն), որը բաղկացած է 4 ենթագլխից, սահմանվում են «նպատակային դիրքորոշում» և «սոցիալական սպասումներ» գիտական հասկացությունները, տրվում են դրանց կառուցվածքային բաղադրիչները, հիմնական առանձնահատկությունները, հայեցակարգային մոտեցումները: Հասկացությունները դիտարկվում են սոցիալական հոգեբանության տեսանկյունից:

Մասնավորապես նշանակալի է ատենախոսի կողմից իրականացված «նպատակային դիրքորոշում» հասկացության օպերացիոնալիզացիա և ինտերպրետացիա՝ ամբողջացնելով դրանց կառուցվածքային բաղադրիչները և նշելով բովանդակային ասպեկտները:

Ատենախոսը մանրակրկիտ վերլուծության է ենթարկել սոցիալական սպասում հասկացությունը՝ առանձնացնելով երեք մակարդակ՝ միջանձնային

հարաբերություններում ակնկալիքներ, կյանքի հեռանկարների և սեփական անձի ակնկալիքներ: Այն նաև նախանշում է ակնկալիքներ կազմող կառուցվածքային տարրերը:

Ատենախոսության երկրորդ գլխում (*Երիտասարդության շրջանում նպատակային դիրքորոշումների եվ սոցիալական սպասումների ձեվավորման և դրսեվորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները*) անդրադարձ է կատարված երիտասարդության՝ որպես սոցիալ հոգեբանական տարիքի հայեցակարգային վերլուծությանը: Մասնավորապես նշված է տարիքի պարբերացման և սահմանների սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրը, դրա ընկալման և գիտական համակարգման դժվարությունները: Այս գլխում ատենախոսը ընդգծում է թեմային բնորոշ մշակութային և սոցիալական ասպեկտները՝ շեշտը դնելով երիտասարդների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վրա: Այն ուսումնասիրում է սոցիալական հասունության հայեցակարգը՝ ուսումնասիրելով դրա բաղադրիչներն ու չափման մեթոդները:

Ատենախոսության երրորդ գլուխը *(Երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների եվ սոցիալական սպասումների ազդեցության փորձարարական ուսումնասիրություն)* նվիրված է հետազոտության մեթոդաբանությանը, ռազմավարությանը, հարցարանների տեղայնացմանը, փորձարկման փուլերին, հետազոտական համակազմին, էմպիրիկական հետազոտության նկարագրությանը, էմպիրիկական հետազոտության փուլերի արդյունքների վերլուծությանը:

Որպես հետազոտության իրականացման ռազմավարական ելակետ ատենախոսը ներկայացրել է հետազոտության իրականացման ճանապարհային քարտեզ, որտեղ հակիրճ նկարագրված է հետազոտության տրամաբանական կառուցվածքը, պատճառահետևանքային կապերը և քայլերի հաջորդականությունը: Հավաստող գիտափորձի արդյունքները ներկայացված են՝ ըստ առաջադրված խնդիրների հերթականության, ինչը դյուրին է դարձնում ծավալուն նյութի վերլուծությունը և ընկալումը:

Երիտասարդների նպատակային դիրքորոշումների առաջնային օղակ, կամ նպատակային դիրքորոշումների համար վեկտոր ատենախոսը մատնանշել է նվաճման մոտիվացիան, որով պայմանավորված են նպատակների ընտրությունը, դրանց հասնելու գործողությունների ալգորիթմի որոշումը և իրականացման արդյունավետությունը:

Փորձարարական հետազոտություններն իրականացվել են գիտական ճշգրտությամբ, ինչի արդյունքում ապացուցվել է, որ

- Նպատակային դիրքորոշումները և սոցիալական սպասումները ունեն քանակական և որակական տարբեր դրսևորումներ նվաժման տարբեր մոտիվացիա ունեցող երիտասարդների շրջանում:

- Հաջողության հասնելու անորոշ դրդապատճառով անձինք առավել ճկուն են իրենց նպատակադրման, դրանց հասնելու գործողությունների ընտրության հարցում, քան մյուս երկու նվաճման մոտիվացիա ունեցող խմբերի ներկայացուցիչները:
- Անձի ռեֆլեքսիվությունը առանցքային դեր է կատարում նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների կիրառման գործում, մասնավորապես հենց այս փոփոխականն է պայմանավորում երիտասարդի նպատակադրման օրինաչափությունները, սոցիալական սպասումների որակական բնութագրերը և ինքնագնահատականի վրա վերջիններիս ազդեցության աստիճանը:
- Երիտասարդության տարիքի ողջ ընթացքում նպատակային դիրքորոշումները և սոցիալական սպասումները ունեն քանակական և որակական դրսևորման տարբերություններ՝ պայմանավորված անձի կյանքի նվաճումներից, երիտասարդի հիմնական կենսական ապրումներից, անձնական և մասնագիտական կյանքում գրանցած հաջողություններից:

Փորձարարական ճանապարհով բացահայտվել են անձի վարքային երկու ռազմավարություններ, որոնք հենվելով ռեֆլեքսիվության բարձր մակարդակի վրա, դրսևորում են սպասումների յուրահատուկ վերահսկման և նպատակադրման մոտեցումներ, որոնց հիմնական նպատակն է պահպանել ինքնագնահատականի բարձր կամ չափազանց բարձր մակարդակը:

Նաիրա Սամվելի Հարությունյանի ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է՝ շարադրված գրագետ գիտական լեզվով և ոճով: Այն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գործնական նշանակություն և կարող է հիմք հանդիսանալ անձի տնտեսական վարքի հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների համար: Հետազոտության արդյունքները հավաստի են: Հեղինակի հրատարակած հոդվածները լիովին արտացոլում են հետազոտված հիմնախնդիրը, ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Անդրադառնանք մեր կողմից Ն. Ս. Հարությունյանի ատենախոսության մեջ նկատված որոշակի թերություններին և նկատառումներին:

1. Հեղինակը անդրադառնալով հիմնախնդրի մշակվածության աստիճանի քննարկմանը նշում է, որ նպատակային դիրքորոշում հասկացությունը գրականության մեջ քիչ ուշադրության է արժանացել և չի մատնանշում, թե որ ժամանակաշրջանի հետազոտություններին են վերաբերվում: Նաև ատենախոսը կարող էր մեջբերել հայրենական հեղինակների աշխատանքները, որոնք առկա են սոցիոլոգների և հոգեբանների գործերում: Ըստ մեզ կարելի էր նշել Ն. Շահինյանի

(2015), Վ. Միրաքյանի (2011), Լ. Պետրոսյանի (2021), Ժ. Եսայանի (2018) վերջին տարիներին հրատարակված հոդվածներին, որ այդ գիտնականները դիրքորոշումների դիտարկումը իրականացրել են այլ տեսակետից ու մեթոդանությամբ:

2. Ցանկալի է պարզաբանել հեղինակի կողմից թե ինչ տրամաբանությամբ են հետազոտության խնդիրները ատենախոսության էջ.6 և էջ.109 ներկայացված են տարբեր շարադրանքով և ինչու են անվանվել «...ավելի կոնկրետ խնդիրներ»: Փորձարարական ուսումնասիրության երրորդ գլխում դրան կարելի էր անվանել հետազոտական խնդրահարույց դրույթներ կամ հարցեր:
3. Մեր կարծիքով, ռուսերեն լեզվով վերլուծված գրականության ցանկը չի պարունակում վերջին տասը տարվա բավարար հետազոտություններ: Միաժամանակ նշենք, որ անգլիալեզու աշխատություններում այդ բացը լրացվել է:
4. Ցանկալի է ստանալ պատասխան այն բանի մասին, որ պաշտպանության ներկայացված 3-րդ դրույթը, որում նշվում է «Նվաճման տարբեր մոտիվացիա ունեցող անձինք ունենում են տարբերվող նպատակային դիրքորոշումներ և սոցիալական սպասումներ: Դա մասնավորապես ակնառու է դառնում գործունեության բարդության ընտրության, նոր գործունեություն ծավալելու, պատասխանատվություն ընդունելու, արդյունքների կանխատեսման, հեռահար կամ մոտակա նպատակներ դնելու գործողություններում:» Որքանով այդ դրույթը համահունչ կամ հակասում է Ա.Էլլիոտի և Հ.ՄաքԳռեգորի (Elliot, A. J., & McGregor, H. A. (2001).) մոտեցմանը: Ըստ որի՝ երկու նպատակային կողմնորոշումների և երկու վարքային տրամադրությունների ինտեգրումը հանգեցնում է ձեռքբերման նպատակների չորս տարբեր ձևերի. տիրապետման մոտեցման նպատակներ, տիրապետման խուսափման նպատակներ, նվաճումների մոտեցման նպատակներ և կատարումից խուսափելու նպատակներ:[1]
5. Սույն ատենախոսության ուսումնասիրությամբ ի հայտ են եկել նաև որոշ տեխնիկական և խմբագրական բացթողումներ, մասնավորապես.
   - գծապատկերները բավարար չափի չեն, և առանցքի արժեքները ու «N»-ը նշված չեն: Այս գծապատկերները որակի առումով ավելի ընթեռնելի են ներկայացված սեղմագրում:

[1] Elliot, A. J., & McGregor, H. A. (2001). A 2 × 2 achievement goal framework. *Journal of Personality and Social Psychology*, **80**(3), 501–519. **https://doi.org/10.1037/0022-3514.80.3.501**

- 158-րդ էջ 2.2.8-ում ենթագլխում նպատակահարմար կլիներ ներկայացնել նշանակալի «r» ցուցանիշների հարաբերակցության աղյուսակը, որը տեղափոխվել է Հավելված 8:

Նշենք, որ նշված դիտողությունները և նկատառումները մասնավոր բնույթի են և ամենևին չեն անդրադառնում Ն.Ս. Հարությունյանի ատենախոսության բովանդակության և գիտական արժեքի վրա:

Այսպիսով, կարող ենք **եզրակացնել**, որ Հարությունյան Նաիրա Սամվելի ԺԹ. 00. 03- «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Երիտասարդների նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունը ինքնագնահատականի վրա» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Որպես ավարտուն գիտական աշխատանք այն իր բնույթով նորություն և հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում է: Գտնում ենք, որ ատենախոսության հեղինակ Նաիրա Հարությունյանը միանգամայն արժանի է իր հայցման գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

հոգեբանական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Հրանտ Միքայելի Ավանեսյան

Հ.Մ.Ավանեսյանի ստորագրությունը հաստատում եմ.

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար՝

բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

ք. Երևան, 02.07.2024